## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵԱ-ԳՀԾՁԲ-25/94 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **30 դեկտեմբերի 2025թ.**

2025թ. դեկտեմբերի 29-ից 30-ը, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման ԵԱ-ԳՀԾՁԲ-25/94 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Վ. Պապյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի անվտանգ երթևեկության ծառայության պետ, |
| Ն. Բաղդասարյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ՝ նյութական գծով, |
| Ս. Ավագյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ավագ հաշվապահ, գլխավոր հաշվապահի պ/կ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Լ. Հայրապետյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով թիվ 1 Հավելվածով Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. դեկտեմբերի 29-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի գրասենյակում ժամը 17:45-ին Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային արժեքը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ՝ KIA OPTIMA | 111,000.00 |
| 2 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ՝ KIA CERATO | 111,000.00 |
| 3 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ՝ CHEVROLET | 105,000.00 |
| 4 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ՝ ԺՈՆԳ ԹՈՆԳ | 22,600,000.00 |
| 5 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ՝ ՀԱՅԳԵՐ | 5,224,500.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025թ. դեկտեմբերի 29-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ. դեկտեմբերի 30-ին, Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան __________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան __________

Վ. Պապյան __________

Ն. Բաղդասարյան __________

Ս. Ավագյան __________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան __________